

Կարծիք

Լ.Ա. Բազիկյանի «Անդրադարձության և փոխադարձության կառույցների գործառական և գործաբանական հայեցակերպերը անգլերենում (հայերենի զուգադրությամբ)» թեմայով ատենախոսության մասին

Պաշտպանության դրված ատենախոսությունը նվիրված է անգլերենի անդրադարձության և փոխադարձության կառույցների ուսումնասիրությանը հայերենի զուգադրությամբ: Ատենախոսն իր առջև նպատակ է դրել «բացահայտել անգլերենի անդրադարձ և փոխադարձ կառույցների գործաբանական առանձնահատկությունները, ուսումնասիրել դրանց տեսակներն ու գործառույթները լեզվի տարբեր մակարդակներում, ինչպես նաև հիշյալ կառույցները զուգադրելով հայերենի հետ՝ ներկայացնել համարժեք կառույցների ընդհանրություններն ու տարբերությունները» (էջեր 5-6): Սկզբից նեթ նշեմ, որ նա հասել է իր նպատակին, հաջողությամբ իրականացնելով մի շարք կարևոր խնդիրներ: Ատենախոսին թողնելով աշխատանքը մանրամասնորեն ներկայացնելու խնդիրը («Ամեն մեկին իրենը», ինչպես ասում են), կանգ կառնեմ նախ՝ ատենախոսության հայեցակարգային հիմնադրույթների, ինչպես նաև արժանիքների վրա:

1. Գրավում է նախևառաջ անդրադարձության և փոխադարձության կառույցների, որոնք միշտ եղել են հետազոտողների ուշադրության կենտրոնում, ուսումնասիրության հայեցակերպը: Հետազոտությունը կատարվել է ժամանակակից լեզվաբանական ուղղությունների լույսի ներքո. գործառական և գործաբանական հայեցակերպերից: Իսկ այդ մոտեցումները հնարավորություն են տալիս նորովի և ավելի խորը ուսումնասիրել քերականական կարգերը: Ինչպես իրավամբ նշում է ատենախոսը, «լեզուն շարունակաբար զարգացող կենդանի համակարգ է, որի զարգացումն ակնհայտ կերպով դրսևորվում է նաև քերականական հարաբերությունների վերիմաստավորման և դրանց արտահայտչամիջոցների փոփոխության մեջ» (էջ 4): Կապելով քերականական կարգերը իմաստային կարգերի հետ, նա արդարացիորեն նշում է, որ «իմաստային կարգերը, իրենց հերթին, անմիջականորեն փոխկապակցված են միջավայրի փոփոխությունների ամբողջականությամբ՝ պայմանավորված մի շարք արտալեզվական գործոններով, ինչը բխում է լեզվամտածողության շարժընթացիկ առանձնահատկություններից, որոնք մարդկությունը կուտակել է և շարունակում է կուտակել իր զարգացման տարբեր փուլերում» (էջ 4): Վերջապես, չափազանց կարևոր է ուսումնասիրության գործաբանական

հայեցակետը, որը կապվում է հաղորդակցման տարբեր ձևերի, նաև համատեքստերի ընդլայնման հետ: Նշված հայեցակերպերի համակցությունը աստենախոսին թույլ է տվել վերհանել ուսումնասիրվող կառույցների գործառական և նոր՝ իմաստագործաբանական առանձնահատկությունները՝ «էականորեն վերափոխելով նախկինում դրանց գործառույթները խոսքում և լեզվում առհասարակ» (էջ 5): Կարևոր է նաև շեշտել, որ անգլերենի անդրադարձ և փոխադարձ կառույցների ուսումնասիրությունը կատարվել է հայերենի համապատասխան կառույցների գուգադրությամբ, ընդ որում այդօրինակ ուսումնասիրությունը նախադեպ չունի: Վերոնշվածը վկայում է աստենախոսության նորությի, արդիականության և կարևորության մասին:

2. Որպես արժանիք պետք է նշեմ աշխատանքի հստակորեն մշակված մեթոդաբանությունը՝ հիմնված տեսական լավ հենքի և հետազոտության մեթոդների վրա: Վերև արդեն նշվել է, որ ուսումնասիրության առարկա հանդիսացող կառույցները, կարևոր և միևնույն ժամանակ չափազանց խրթին, ոչ միանշանակ լինելով, միշտ են եղել լեզվաբանների հետաքրքրության կիզակետում: Հեղինակը ցուցաբերում է թեմային առնչվող տեսական գրականության խորը իմացություն, ինչը ամուր հիմք է ծառայում աստենախոսության համար: Գրականության ցանկը պարունակում է օտարալեզու և հայ գիտնականների աշխատությունների, այդ թվում նորագույն, 164 անուն, ինչպես նաև 36 բառարաններ և տեղեկատուներ: Ինչ վերաբերում է հետազոտության մեթոդներին, ապա Լ.Ս. Բազիկյանը, ելնելով դրա նպատակաուղղվածությունից, կատարել է տարբեր մեթոդների ճիշտ ընտրություն, որոնց համակցությունը թույլ է տվել լավագույնս կատարել ուսումնասիրությունը: Լավ մտածված է նաև էմպիրիկ նյութի ընտրությունը: Մասնավորապես, ազգային կորպուսներից քաղված նյութը հնարավորություն է ընձեռել կատարելու թե՛ որակական և թե՛ քանակական վերլուծություն, ի հայտ բերելու փոխադարձ դերանունների գործաբանական նրբիմաստները, ինչպես նաև ցույց տալու տարբեր լեզվական ոճերում դրանց հաճախականությունը անգլերենում և հայերենում:
3. Չափազանց գովելի է եզրաբանության և հասկացությունների ճշգրտումը, ընդհուպ մինչև եզրույթների ստուգաբանությունը: Դա կարևոր է ոչ միայն ցույց տալու համար այս կամ այն եզրույթի տարաբնույթ ընկալումները տարբեր ժամանակաշրջաններում և տարբեր գիտնականների կողմից, այլև այս կամ այն եզրույթի և դրանով նշանակվող հասկացության աստենախոսի ըմբռնումը միանշանակորեն և հստակորեն հասկանալու տեսանկյունից:

4. Պետք է որպես արժանիք նշել, որ ընդհանրապես ամբողջ աշխատանքն է աչքի ընկնում հստակությամբ: Այն ունի կոռ և տրամաբանական կառուցվածք, բացառիկ գրագետ է շարադրված, ինչը խոսում է հեղինակի կողմից թեմային լավ տիրապետելու մասին: Յուրաքանչյուր ենթագլուխ (ինչպես և Գլուխները) ավարտվում է հակիրճ և հստակ ամփոփումով, հստակ են նաև Ներածությունն ու հետազոտության հիման վրա կատարված Եզրակացությունը:
5. Արժանիքների թվին կարելի է դասել նաև զանազան դասակարգումները, տիպերի վերհանումը, ինչը առավել ևս հայերենի գուգադրությամբ, որոշակիորեն տիպաբանական բնույթ է հաղորդում ատենախոսությանը, դրանով իսկ է՛լ ավելի է մեծացնում դրա տեսական արժեքը: Աշխատանքում գետնեղված են սխեմաներ, բազմաթիվ աղյուսակներ, գծապատկերներ, և դա կարևոր է տեսական դրույթները ավելի ընկալելի և տեսանելի ներկայացնելու համար, այդ թվում նաև գործնականում՝ դասավանդելիս: Հետևապես, ատենախոսությունն ունի տեսականից բացի, կիրառական նշանակություն:
6. Հարկ է շեշտել, որ հեղինակը յուրաքանչյուր խրթին և վիճահարույց հարցի շուրջ արհահայտում է իր դիրքորոշումը, ընդ որում դա անում է փաստարկված և համոզված կերպով: Լ.Ա. Բազիկյանի «ես»-ը չափազանց արտակա է, և դա, ինչ խոսք, կարևոր է, մասնավորապես, գիտության մեջ:

Ուշադրության են արժանի, օրինակ, ատենախոսի հետևյալ պնդումներն ու եզրակացությունները: Հետազոտելով անգլերենի անդրադարձ կառույցները «Հնարավոր քերականության» շրջանակներում, նա փաստում է, որ «հանդես գալով անդրադարձ դերանունների հետ, տվյալ բայերը տարբեր համատեքստերում դրսևորում են բազում գործաբանական իմաստներ» (էջ 82): Անգլերենի անդրադարձ կառույցների գուգադրական ուսումնասիրությունը հայերենի համապատասխան կառույցների հետ ատենախոսին հիմք են տալիս եզրակացնելու, որ «երկու լեզուները կառուցվածքային և իմաստային-գործաբանական տեսանկյուններից ցուցաբերում են և՛ ընդհանրություններ, և՛ տարբերություններ, ընդ որում, կառուցվածքային տարբերությունները ավելի շատ են՝ ելնելով հայերենի նախադասության շարահյուսական և հաղորդակցական հատկություններից» (էջ 101): Հետաքրքրական դիտարկումներ են կատարվում առ այն, որ «Ժամանակակից անգլերենում՝ հատկապես խոսակցական լեզվում, փոխադարձ դերանունները ընդլայնել են իրենց կիրառության շրջանակները և խնդիրների պաշտոններից զատ ստանձնում են նաև ենթակայի պաշտոնը» (էջ 125), որ ամերիկյան անգլերենում «each other» և «one another» փոխադարձ դերանունները ավելի գործածական են,

քան բրիտանական անգլերենում, ընդ որում երկու տարբերակում էլ «each other»-ի կիրառության դեպքերը ավելի շատ են (էջ 129): Եզրակացվում է նաև, որ անգլերենում և հայերենում փոխադարձ դերանունները իմաստային-գործաբանական առումով համընկնում են, «թեև հաճախականության և գրական տարբեր ոճերի կիրառության տեսակետից չի կարելի խոսել բացարձակ նույնության մասին» (էջ 130):

Այժմ անցնեմ, ընդդիմախոսի իմ կարգավիճակից ելնելով, խոսույթիս երկրորդ մասին, քանի որ, ինչպես հայտնի է, անթերի աշխատանքներ, ըստ սահմանման, չեն լինում:

1. Անհասկանալի է, թե ատենախոսության համար որպես տեսական նյութ, ի թիվս նշված նյութերի, ինչ «լեզվաբանների նամակագրություններ» (էջ 7) են հիմք ծառայել: Ի՞նչ ասել է «հոդվածներ, մենագրություններ, ատենախոսություններ, թեզեր և այլ գիտական աշխատանքներ» (ընդգծումն իմն է – Լ.Բ.) (էջ 10): Անհարթ է հնչում նաև «գրականության արտահայտչամիջոց» (էջ 92) արտահայտությունը: «Անգլիացի և հայ հետազոտողներ/լեզվաբաններ» (էջեր 8, 131) արտահայտությունը նվազեցնում է հեղինակի կողմից ուսումնասիրված տեսաբանների գործերի ցանկը. չէ՞ որ ընդգրկված են մեծ քանակությամբ օտարալեզու այլ հեղինակների գիտական աշխատությունները:
2. Թեպետև, ինչպես նշվել էր, ատենախոսը չափազանց գրագետ հայերենով է ներկայացրել իր տեքստը, այդ թվում հայերեն համապատասխան եզրույթները, զարմանալիորեն սպրդել է «մոդել» եզրույթը (էջ 8), այնինչ դրա համարժեք «կադապար»-ը օգտագործված է 12-րդ էջում: Ավելի ճիշտ չէ՞ր լինի արդյոք, հիմնվելով պրոֆ. Ա. Նազարյանի բառարանի վրա, «конверсная трансформация»-ն թարգմանել «փոխակարգային փոխակերպում» և ոչ թե «փոխակերպային ձևափոխություն» (էջ 13).
3. Հետազոտության բավականին հարուստ էմպիրիկ նյութը քաղված է տարբեր աղբյուրներից, այդ թվում, ինչպես արդեն նշվել է, ազգային կորպուսներից: Սակայն լավ կլիներ, որ անգլերեն նյութը քաղված լիներ ոչ միայն 19-20-րդ դարերի անգլո-ամերիկյան ստեղծագործություններից (տե՛ս էջ 7): Խորհուրդ կտայի նաև հետազայում ընդգրկել անգլերենի այլ տարբերակների նյութը:
4. Գրականության ցանկում, ի տարբերություն այլ հեղինակների, ռուսալեզու հեղինակների հայրանունները սկզբնատառերը նույնպես պետք է նշվեն. գլոբալացումը չպետք է այդչափ տարածում ունենար:
5. Կցանկանայի պարզաբանումներ լսել՝ կապված ատենախոսի որոշ պնդումների հետ: Այնքան էլ համոզիչ չեն, այնուամենայնիվ,

եզրակացությունները, որ «ըստ «Հնարավոր» քերականության՝ անդրադարձ բայերի և դերանունների միասնական կիրառությունը հանգեցնում է զանազան գործաբանական նրբերանգների, որոնք միշտ չէ, որ գտնում են իրենց համարժեքները հայերենում» (էջ 86), որ «իմաստային-գործաբանական տեսակետից անզլերենի անդրադարձ կառույցները ավելի բազմաբնույթ են և բազմիմաստ» (էջ 101): Կցանկանայի, որ հեղինակը մեկնաբաներ, թե ինչու է նա պնդում, ճիշտ է, հղում անելով պրոֆ. Մ. Ասատրյանին, որ ի տարբերություն անզլերենի, հայերենի բուն անդրադարձ բայերը թվով ավելի շատ են (էջ 55): Վերջապես, «սիրահարվել» բայը դժվար թե միանշանակորեն կարելի է ընկալել որպես փոխադարձ բայ (տե՛ս էջ 103). այլապես չէինք խոսի անպատասխան, դժբախտ սերերի և սիրահարվածությունների մասին:

Վերոնշվածը, ինչպես կարելի էր նկատել, մասնակի բնույթի դիտողություններ և ցանկություններ են: Հայեցակարգային բնույթի դիտողություններ չունեն: Այս կապակցությամբ տեղին է, կարծում եմ, բերել Բ. Ռասելի հետևյալ խոսքերը Լ. Վիտգենշտայնի «Տրամաբանական-փիլիսոփայական տրակտատի» մասին. «Որպես մեկը, ով երկարամյա սեփական փորձով է ծանոթ տրամաբանության դժվարություններին և անհերքելի թվացող տեսությունների խաբուսիկությանը, ես չեմ կարող վստահ լինել այս կամ այն տեսության ճշմարտացիությանը միայն այն հիմքի վրա, որ չեմ կարող տեսնել, թե ինչն է դրանում կեղծ: Բայց կառուցել տրամաբանության տեսություն, որը ոչ մի կետում ակնհայտորեն կեղծ չէ, նշանակում է արտակարգ դժվարության ու կարևորության աշխատանք կատարել»:

Ամփոփեն խոսքս. ընդդիմախոսվող աշխատանքը լուրջ, կարևոր և արդիական մի հետազոտություն է, որն ունի նորույթ, տեսական և գործնական նշանակություն: Այն լիովին բավարարում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջները: Ատենախոսության հիմնադրույթները արտացոլված են հեղինակի հրապարակումներում և սեղմագրում:

Վերն ասվածը ինձ հիմք է տալիս միջնորդելու ԵՊՀ գիտական աստիճաններ շնորհող 009 «Օտար լեզուներ» մասնագիտական խորհրդի առջև՝ Լ.Ա. Բազիկյանին շնորհելու հայցվող աստիճանը Ժ. 02. 07 – «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտության գծով:

ԵՊՀ գիտքարտուղար՝
պատմական գիտությունների թեկնածու,
դոցենտ Լ. Ա. Բազիկյան



պաշտոնական ընդդիմախոս՝
Բ.գ.դ., պրոֆեսոր Լ.Գ. Բրուտյան
16.03.2022